ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-007-18.08.2021-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ»	1. Առաջարկում ենք Նախագծում նշված «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» վերտառությունը հանել, քանի որ քննարկվող չհամարակալված վերտառությունը նորմատիվ իրավական ակտի մաս չի համարվում:	Ընդունվել է: «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» վերտառությունը հանվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Կառավարության որոշումներով ընտրված կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից այդ որոշումներով սահմանված ներմուծված (ներմուծվող) ապրանքների մասով կիրառվում են մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենսգրքով սահմանված կարգավորումները **մինչև նշված հարաբերությունների ավարտը:**»:	Ընդունվել է:	Ընդունվել է: